## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 3

## ԵԱ-ԷԱՃԱՊՁԲ-24/40 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

**ք. Երևան** **27 դեկտեմբերի 2024թ.**

2024թ-ի դեկտեմբերի 27-ին՝ ժամը 12:00-ին, ՀՀ, ք. Երևան, Թևոսյան 9 հասցեում գտնվող «ԵՐԵՎԱՆԻ ԱՎՏՈԲՈՒՍ» ՓԲԸ-ի շենքում տեղի ունեցավ անհպում մաքրող հեղուկի ձեռքբերման ԵԱ-ԷԱՃԱՊՁԲ-24/40 ծածկագրով գնման ընթացակարգի (այսուհետ՝ Ընթացակարգ) գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) նիստը:

Հանձնաժողովի նիստին մասնակցում էին Հանձնաժողովի հետևյալ անդամները.

Ն. Սուքիասյան՝ «ԵՐԵՎԱՆԻ ԱՎՏՈԲՈՒՍ» ՓԲԸ-ի տնօրենի տեղակալ,
Ն. Բաղդասարյան՝ «ԵՐԵՎԱՆԻ ԱՎՏՈԲՈՒՍ» ՓԲԸ-ի հաշվապահ,
Վ. Սանթուրյան՝ «ԵՐԵՎԱՆԻ ԱՎՏՈԲՈՒՍ» ՓԲԸ-ի տնտեսագետ:

Հանձնաժողովի նիստը նախագահում էր Ն. Սուքիասյանը: Հանձնաժողովի նիստին ներկա էր Հանձնաժողովի քարտուղար Վ. Էլոյանը՝ «ՓՐՈՄՈՈՒՇՆ» ՍՊԸ-ի ներկայացուցիչը:

Հաշվի առնելով, որ Հանձնաժողովի կազմը բաղկացած է երեք անդամից, իսկ Հանձնաժողովի նիստին մասնակցում էին Հանձնաժողովի բոլոր անդամները, հետևաբար՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 26-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված պահանջների համաձայն Հանձնաժողովի նիստը համարվեց իրավազոր և հայտարարվեց բացված:

### ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ

1. Ընթացակարգը չկայացած հայտարարելու և անգործության ժամկետ սահմանելու մասին:

### 1. ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ ՉԿԱՅԱՑԱԾ ՀԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ ԵՎ ԱՆԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովի քարտուղար Վ. Էլոյանը Հանձնաժողովի անդամներին տեղեկացրեց, որ Ընթացակարգի շրջանակում հաղթող (ընտրված) մասնակից ճանաչված «ԳԱՐԱՆՏ 24» ՍՊԸ-ն, սահմանված ժամկետում՝ ոչ ուշ քան 26.12.2024թ-ն ներառյալ, սահմանված կարգով՝ eauction համակարգում չի կցել իր կողմից հաստատված պայմանագիրը, ինչպես նաև Պատվիրատուին չի ներկայացրել, տուժանքներն ուղեկցող գրությամբ:

Հաշվի առնելով վերոգրյալը, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ կետով սահմանված պահանջների համաձայն, Հանձնաժողովը որոշեց.

1. «ԳԱՐԱՆՏ 24» ՍՊԸ -ի կողմից ներկայացված հայտը՝ գնահատել անբավարար և մերժել:

2. Հիմք ընդունելով գնահատման թերթիկը՝ հաստատել գնահատման հետևյալ արդյունքները.

| Հ/Հ | Մասնակցի անվանումը | Գնահատման արդյունքը |
|---|---|---|
| 1-ին | «ԳԱՐԱՆՏ 24» ՍՊԸ | անբավարար |

Հանձնաժողովը որոշեց.

1. «ԳԱՐԱՆՏ 24» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել համապատասխան գործընթաց՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված պահանջները կիրառելու նպատակով:

2. Ընթացակարգը՝ հայտարարել չկայացած, հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին կետի 4-րդ ենթակետով սահմանված պահանջները:

3. «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն՝ անգործության ժամկետ սահմանել Ընթացակարգի շրջանակում հրապարակվող հայտարարությունները հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 10-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

Կողմ՝ 3, դեմ ՝ 0:

*Հանձնաժողովի նախագահ՝*

Ն. Սուքիասյան ____________

*Հանձնաժողովի անդամներ՝*

Ն. Բաղդասարյան ____________

Վ. Սանթուրյան ____________

*Հանձնաժողովի քարտուղար՝*

Վ. Էլոյան ____________